ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մարտի 2026 թվականի N 1070

«ԷԿՈ ԱԳՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 11-րդ կետի, 24-րդ կետի 3-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն որոշման, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2026 թվականի փետրվարի 24-ի N 01/03.1/01540-2026 գրությամբ (մուտք՝ 2026 թվականի փետրվարի 24-ի N Պ-579) տրամադրված լիազոր մարմնի համաձայնությունը և հիմք ընդունելով «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Էդուարդ Հովսեփյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի սեպտեմբերի 02-ի N S-2209).

1. «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող (հիմք՝ 2023 թվականի փետրվարի 22-ի N 22022023-07-0104 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մարշալ Բաբաջանյան թաղամասի 1-ին փողոցի 16/1 հասցեում գտնվող 07-011-0274-0017 կադաստրային ծածկագրով 0.88943 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի կառուցապատման կարգավորիչները փոփոխել միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտու կառուցապատման կարգավորիչների՝ ԲՆԿԳ-3 (6-9 վերգետնյա հարկ):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Աբովյան համայնքի ավագանու կողմից հաստատվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. մարտի 04
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

N

ՀՀ Կոտայքի մարզպետ
պարոն Աիարոն ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

2025թվականի նոյեմբերի 3-ի
N 01/03.1/10482-2025 և
2025 թվականի նոյեմբերի 17-ի
N 01/03.1/11011-2025 գրություններ

Հարգելի պարոն Սահակյան

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող իրավաբանական անձի սեփականությունը հանդիսացող, 07-011-0274-0017 կադաստրային ծածկագրով 0.88943 հա մակերեսով հողամասի գլխավոր հատակագծի տեքստային մասում փոփոխություն կատարելու՝ ԲՆԿԳ-3 (6-9 վերգետնյա հարկ) սահմանելու առաջարկության վերաբերյալ հայտնում եմ, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 11-րդ կետը և 24-րդ կետի 4-րդ և 10-րդ ենթակետերը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) առարկություններ չունի:

Քաղաքաշինական հարցերի շուրջ Կոմիտեն իր կարծիքը կհայտնի նախագիծը պետական համալիր փորձաքննության ներկայացնելու ժամանակ:

Միաժամանակ տեղեկացնում եմ՝

1.կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ մասնավորապես ապահովելով ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել՝ հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ու ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների գրություններով ներկայացված պահանջները (կցվում են):

3. Աբովյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Առինջ բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի (Առինջ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն գրությունից բխող փոփոխությունները:

Առդիր՝ 2 ֆայլ:

Հարգանքով՝

2/20/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Եղիազար ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Լևոն Առաքելյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող՝ Քաղաքաշինության և տարածական պլանավորման բաժնի
գլխավոր քաղաքաշինարար Անի Անդրեասյան, 011 621 746